


**«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | |
|----|--|---|
| 1. | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ..... | 3 |
| 2. | ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... | 3 |
| 3. | ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ | 3 |
| 4. | ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ..... | 4 |
| 5. | ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ..... | 4 |
| 6. | ՀԵՌԱԽՈՍՈՎ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ..... | 6 |
| 7. | ՖԱԶՍՈՎ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ..... | 7 |
| 8. | ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԱՅԼ ԿԱՆՈՆՆԵՐ..... | 8 |

| | | | |
|---|---|-------------------------------|------------------------------|
|  | Կապի միջոցների օգտագործմամբ հաղորդագրությունների փոխանակման ընթացակարգ | | |
| | Տարբերակ՝ 1 | Կարգավիճակը՝ հաստատված | Ամսաթիվ՝ 16/11/2007թ. |

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ


- 1.1. Սույն ընթացակարգը սահմանում է բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բրոքեր) և նրա Հաճախորդների միջև հաղորդագրությունների փոխանակման կանոններն ու եղանակները, ինչպես նաև կարգավորում է Բրոքերի և Հաճախորդների միջև այդ փոխանակման արդյունքում ի հայտ եկող իրավահարաբերությունները:
- 1.2. Սույն ընթացակարգը հանդիսանում է Բրոքերի կողմից հաստատված Բրոքերային (դիլերային) գործունեության իրականացման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) և Բրոքերի ու Հաճախորդի միջև կնքված Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:

2. ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. Սույն ընթացակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
 - 2.1.1. **Հաղորդագրություններ.** Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության ընթացքում Հաճախորդի և Բրոքերի կողմից միմյանց ներկայացվող ցանկացած կարգադրական և այլ տեղեկատվական հաղորդագրություններ և փաստաթղթեր:
 - 2.1.2. **«Հաճախորդ».** անձ, որի հետ Բրոքերն ունի բրոքերային ծառայությունների մատուցման գործող պայմանագիր:
 - 2.1.3. **«Հանձնարարական».** Հաճախորդի կողմից Բրոքերին տրվող և Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով Բրոքերի կողմից գործարքի կնքման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ:
- 2.2. Սույն ընթացակարգում օգտագործված, սակայն սույն բաժնում չսահմանված այլ հասկացություններն ունեն Կանոններով սահմանված նշանակությունը:

3. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- 3.1. Բրոքերի և Հաճախորդի միջև ցանկացած Հաղորդագրության փոխանակումն իրականացվում է հետևյալ ընդհանուր կանոնների պահպանմամբ.
 - 3.1.1. Փոխանակումն իրականացվում է երկու Կողմերի համար էլ ընդունելի եղանակով (եղանակներով):
 - 3.1.2. Հաղորդագրությունների փոխանակումն իրականացվում է փոխանակման հիմնական և պահեստային եղանակների օգտագործմամբ:
 - 3.1.3. Փոխանակումն իրականացվում է միայն Կողմերի ներկայացուցիչների միջոցով, որոնք ունեն անհրաժեշտ լիազորություններ և անցել են սահմանված նույնականացման ընթացակարգը: Հաղորդագրությունները կարող են ուղարկվել միայն երկու Կողմերի միջև համաձայնեցված հասցեով (ռեկվիզիտներով):
- 3.2. Առանց վերը նշված պայմանների պահպանման ուղարկված Հաղորդագրությունները կհամարվեն չստացված:
- 3.3. Հաճախորդի և Բրոքերի միջև Հաղորդագրությունների փոխանակման պահեստային եղանակին անցում կատարվում է միայն հիմնական եղանակի օգտագործման անհնարի դեպքում, Հաճախորդի կողմից Բրոքերին նախապես պատշաճ կերպով զգուշացնելով Հաղորդագրությունների փոխանակման պահեստային եղանակին անցում կատարելու փաստի մասին: Հաղորդագրությունների փոխանակման պահեստային եղանակները գործում են մինչև Հաղորդա-

| | | |
|---|---|------------------------|
|  | Կապի միջոցների օգտագործմամբ հաղորդագրությունների փոխանակման ընթացակարգ | |
| | Տարբերակ՝ 1 | Կարգավիճակը՝ հաստատված |
| Ամսաթիվ՝ 16/11/2007թ. | | |

գրությունների փոխանակման հիմնական եղանակների վերականգնվելը: Հաղորդագրությունների փոխանակման հիմնական եղանակի վերականգնման նկատմամբ հսկողությունն իրականացվում է Հաճախորդի կողմից ինքնուրույն՝ յուրաքանչյուր Հանձնարարականի ներկայացումից առաջ:


4. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒՄՆԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

- 4.1. Եթե այլ բան Բրոքերի և Հաճախորդի միջև որևէ լրացուցիչ համաձայնագրով նախատեսված չէ, ապա Հաղորդագրությունների փոխանակումը կարող է տեղի ունենալ Հաճախորդի ընտրությամբ՝ ներքոնշյալ եղանակներից որևիցե մեկով.
 - 4.1.1. թղթային կրիչներով փաստաթղթերի բնօրինակների փոխանակում, ներառյալ փաստաթղթերի փոստով առաքումը,
 - 4.1.2. ֆաքսիմիլային հաղորդագրությունների փոխանակում,
 - 4.1.3. էլեկտրոնային փոստի միջոցով հաղորդագրությունների փոխանակում,
 - 4.1.4. հեռախոսով բանավոր հաղորդագրությունների փոխանակում,
- 4.2. Հաճախորդի և Բրոքերի միջև Հաղորդագրությունների փոխանակումը իրականացվում է Հաճախորդի նույնականացման հետևյալ տարբերակներով.
 - 4.2.1. թղթային կրիչներով փաստաթղթերի բնօրինակների, ֆաքսիմիլային Հաղորդագրությունների, էլեկտրոնային փոստի միջոցով փաստաթղթերի բնօրինակի տեսապատճենի (սքան) փոխանակման ժամանակ օգտագործվում է Հաճախորդի անձնական ձեռագիր ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում լիազոր ներկայացուցչի ստորագրությունը և իրավաբանական անձի կնիքը) և հատուկ գաղտնագիրը,
 - 4.2.2. հեռախոսով բանավոր Հաղորդագրությունների փոխանակման ժամանակ օգտագործվում է հատուկ գաղտնագրերի (կողային աղյուսակի) համակարգը:
- 4.3. Հաճախորդի կողմից տեղեկատվական Հաղորդագրությունների փոխանակման և Բրոքերին Հանձնարարականների ուղարկման եղանակի ընտրությունը կատարվում է հաշվի առնելով սույն ընթացակարգով սահմանված սահմանափակումները:
- 4.4. Բրոքերի բոլոր Հաղորդագրությունները համարվում են Հաճախորդին պատշաճ ձևով ուղարկված սույն ընթացակարգով նախատեսված սահմանափակումների պահպանման դեպքում, եթե այդպիսի Հաղորդագրություններն ուղարկվել են Բրոքերի կողմից Հաճախորդի հասցեով՝ անկախ վերջինիս կողմից դրանց ստացման ժամանակից և պայմաններից:
- 4.5. Բրոքերն իրավունք ունի չկատարել Հաճախորդից ստացված Հանձնարարականը, եթե դրա ընդունման կամ մերժման վերաբերյալ Հաղորդագրություն տրամադրելու հնարավորությունը բացակայում է:
- 4.6. Բրոքերը պատասխանատվություն չի կրում սույն ընթացակարգով սահմանված կապի միջոցների խափանումների հետևանքով Հաճախորդի Հանձնարարականի ընդունման կամ մերժման մասին Հաղորդագրությունը չուղարկելու կամ ժամանակից ուշ ուղարկելու համար:

5. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒՄՆԱԿՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- 5.1. Եթե լրացուցիչ համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա Հաղորդագրությունների փոխանակման ժամանակ Կողմերն առաջնորդվում են լիազորությունների որոշման և հաստատման հետևյալ կանոններով (դրա հետ մեկտեղ Հաճախորդը հաստատում է իր համաձայնությունը ներքոնշյալ դրույթների հետ).

- 5.1.1. Բրոքերը իրավաբանական անձ Հաճախորդի առաջին (Ա) կարգի ստորագրության իրավունք և Հաճախորդի կանոնադրության և ստորագրությունների մմուշների քարտի համաձայն Հաճախորդի անունից առանց լիազորագրի գործարքների կնքելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին դիտարկում է որպես անձ, որը Հաճախորդի անունից լիազորված է իրականացնել Կանոններով նախատեսված բոլոր գործողությունները՝ ներառյալ Բրոքերից հատուկ գաղտնագրերի (կողային աղյուսակների) ստացումը:
- 5.1.2. Բրոքերը իրավաբանական անձ Հաճախորդի ստորագրությունների մմուշների քարտի համաձայն երկրորդ (Բ) կարգի ստորագրության իրավունք ունեցող առանց բացառության բոլոր պաշտոնատար անձանց դիտարկում է որպես անձինք, որոնք լիազորված են:
- 5.1.2.1. Բրոքերի հետ փոխանակել ցակացած տիպի Հաղորդագրություններ, բացառությամբ կարգադրական Հաղորդագրությունների,
- 5.1.2.2. Բրոքերին փոխանցել և նրանից ստանալ ցանկացած տեղեկատվություն և փաստաթղթեր, բացի Հաճախորդին տրամադրված գաղտնագրերի (կողային աղյուսակների) վերաբերյալ տեղեկատվության:
- 5.1.3. Հաճախորդի անունից Բրոքերի հետ Հաղորդագրությունների փոխանակման իրավունք ունեցող այլ անձանց լիազորությունների շրջանակը որոշվում է Բրոքերի կողմից ՀՀ օրենսդրության և Հաճախորդի կանոնադիր փաստաթղթերի համաձայն: Լիազորագրի ձևը սահմանվում է Հավելված 1-ով:
- 5.2. Բրոքերը Հաճախորդին խորհուրդ է տալիս սահմանափակել գաղտնագրերի (կողային աղյուսակների) վերաբերյալ տեղեկատվությանը տիրապետող անձանց թիվը:
- 5.3. Բրոքերը սահմանափակում է իր այն աշխատակիցների թիվը, որոնք ունեն Հաճախորդի գաղտնագրերի (կողային աղյուսակների) վերաբերյալ տեղեկություններին հասանելիության իրավասություն: Գաղտնագրերը (կողային աղյուսակները) ձևավորվում են թղթային կրիչի վրա փաստաթղթի ձևով 2 օրինակից, որոնք հաստատվում են Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) և Բրոքերի լիազորված անձի անձնական ձեռագիր ստորագրություններով, ինչպես նաև Բրոքերի (առկայության դեպքում նաև Հաճախորդի) կնիքով: Գաղտնագրերը (կողային աղյուսակները) պարունակող փաստաթղթի մեկ օրինակը տրվում է Հաճախորդին, իսկ մյուս օրինակը մնում է Բրոքերի մոտ:
- 5.4. Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) ցանկությամբ գաղտնագրերը (կողային աղյուսակները) Բրոքերի կողմից կարող են ուղարկվել Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) էլեկտրոնային փոստի համապատասխան հասցեով՝ կից փաստաթղթի տեսքով:
- 5.5. Հաճախորդն իրավունք չունի բացահայտել գաղտնագրերը (կողային աղյուսակները), բացառությամբ սույն Ընթացակարգով նախատեսված դեպքերում և եղանակներով:
- 5.6. Հաճախորդի բանավոր, գրավոր կամ այլ ցանկացած ձևով ներկայացված առաջին իսկ պահանջով, ինչպես նաև Բրոքերի մոտ այնպիսի տեղեկատվության առկայության դեպքում, որը թույլ է տալիս ենթադրել գաղտնագրերի (կողային աղյուսակների) արտահոսքի կամ Հաճախորդի կողմից դրանց օգտագործման կանոնների խախտման մասին, Բրոքերը պարտավորվում է անմիջապես դադարեցնել ընթացիկ գաղտնագրերի (կողային աղյուսակների) գործողությունը և տեղեկացնել այդ մասին Հաճախորդին հնարավոր ամենաարագ եղանակով:
- 5.7. Հաճախորդի մոտ այնպիսի տեղեկությունների առկայության դեպքում, որոնք թույլ են տալիս ենթադրել Հաճախորդի կամ Բրոքերի աշխատակիցների կողմից գաղտնագրերի (կողային աղյուսակների) օգտագործման կանոնների խախտման կամ դրանց արտահոսքի մասին, Հաճախորդը պարտավոր է այդ մասին տեղեկացնել Բրոքերին հնարավոր ամենաարագ եղանակով:
- 5.8. Սույն ընթացակարգի 5.5. և 5.6. կետերում նշված դեպքերում դադարեցված գաղտնագրերի (կողային աղյուսակների) գործողությունը չի կարող վերականգնվել: Հաճախորդից պաշտոնական գրավոր կարգադրություն ստանալու դեպքում Բրոքերը վերջինիս ներկայացնում է նոր գաղտ-


| | | |
|---|---|------------------------|
|  | Կապի միջոցների օգտագործմամբ հաղորդագրությունների փոխանակման ընթացակարգ | |
| | Տարբերակ՝ 1 | Կարգավիճակը՝ հաստատված |
| Ամսաթիվ՝ 16/11/2007թ. | | |

նագրեր (կողային աղյուսակներ)՝ հաշվի առնելով սույն ընթացակարգի 5.1. կետում նշված կանոնները:

- 5.9. Գաղտնագրերի (կողային աղյուսակների) գործողության ժամկետը որոշվում է Բրոքերի կողմից դրանց տրման ժամանակ: Ժամկետի լրանալու դեպքում Հաճախորդի առաջին իսկ պահանջով Բրոքերն անվճար տրամադրում է նրան նոր գաղտնագրեր (կողային աղյուսակներ)՝ հաշվի առնելով սույն Ընթացակարգի 5.3. կետի պահանջները:

6. ՀԵՌԱՆՈՍՈՎ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 6.1. Եթե լրացուցիչ համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա բացի Հաղորդագրությունների փոխանակումից, Բրոքերը հեռախոսով Հաճախորդից ընդունում է Հաղորդագրություններ, որոնք պարունակում են արժեթղթերով գործարքի կնքման Հանձնարարականներ, ինչպես նաև արդեն տրված Հանձնարարականների հետ կանչման հանձնարարություն, եթե այդ Հանձնարարականներով դեռևս գործարք չի կնքվել Բրոքերի կողմից:
- 6.2. Հեռախոսով Հաղորդագրությունների փոխանակման հնարավորության ստացման համար Բրոքերը Հաճախորդին տրամադրում է հատուկ գաղտնագրեր (կողային աղյուսակներ), որն անհրաժեշտ է իր (իր ներկայացուցչի) լիազորությունների հետագա հաստատման համար:
- 6.3. Հատուկ գաղտնագրերի (կողային աղյուսակների) ստացմամբ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը (ակցեպտ) հեռախոսով Հաղորդագրությունների փոխանակման հետևյալ պայմաններին.
- 6.3.1. Հաճախորդը ընդունում է, որ բոլոր այն Հաղորդագրությունները, որոնք ուղարկվել կամ ստացվել են հեռախոսով, ունեն նույնպիսի իրավաբանական ուժ, ինչպես թղթային կրիչների վրա ձևակերպված (թղթային եղանակով ստացված/ուղարկված) Հաղորդագրությունները:
- 6.3.2. Հաճախորդը և Բրոքերը հավաստում են, որ Հաճախորդի և Բրոքերի լիազոր անձանց միջև հեռախոսային խոսակցության ձայնագրությունները, որոնք իրականացվում են Բրոքերի կողմից, պատշաճ և բավարար ապացույց են համարվում դատական կարգով վեճերի լուծման ժամանակ ներկայացնելու համար:
- 6.4. Հաճախորդին (նրա ներկայացուցչին) գաղտնագրերի (կողային աղյուսակների) տրամադրումից հետո Բրոքերը ցանկացած անձին, որն իր հետ հեռախոսով իրականացնում է Հաղորդագրությունների փոխանակում, դիտարկում է որպես Հաճախորդի ներկայացուցիչ և այդ անձի ցանկացած Հաղորդագրություն (Հաղորդագրություններ, Հանձնարարականներ և հարցումներ) մեկնաբանում է որպես Հաճախորդի Հաղորդագրություն, եթե այդ անձն անցնում է լիազորությունների հաստատման հետևյալ երկփուլ ընթացակարգը.
- 6.4.1. **1-ին Փուլ:** Նշված անձը ճիշտ է անվանում Հաճախորդի հետևյալ ռեկվիզիտները.
- 6.4.1.1. Հաճախորդի լրիվ անվանումը (կամ անուն, ազգանուն, հայրանունը՝ ֆիզիկական անձ Հաճախորդների դեպքում),
- 6.4.1.2. Հաճախորդի և Բրոքերի միջև կնքված Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի համարը:
- 6.4.2. **2-րդ Փուլ:** Բրոքերի աշխատակցի հարցումն ստանալուց հետո նշված անձը անվանում է Բրոքերի կողմից Հաճախորդին (նրա լիազոր ներկայացուցչին) նախապես տրված գաղտնագիրը (կողային աղյուսակի համապատասխան կողը):
- 6.5. Հաճախորդի կողմից հեռախոսով տրված ցանկացած կարգադրական Հաղորդագրություն Բրոքերի կողմից համարվում է ընդունված հետևյալ ընթացակարգի պահպանման դեպքում.

| | | |
|---|---|-------------------------------|
|  | Կապի միջոցների օգտագործմամբ հաղորդագրությունների փոխանակման ընթացակարգ | |
| | Տարբերակ՝ 1 | Կարգավիճակը՝ հաստատված |

- 6.5.1. Հաղորդագրություններ տալուն նախորդում է սույն Ընթացակարգի 6.4. կետում նշված «լիազորությունների հաստատման ընթացակարգը»,
- 6.5.2. Հաղորդագրության բոլոր էական պայմանները Հաճախորդի կողմից արտասանվելուց հետո պետք է անպայման կրկնվեն Բրոքերի աշխատակցի կողմից:
- 6.5.3. Բրոքերի աշխատակցի կողմից Հաղորդագրությունը կրկնելուց հետո Հաճախորդը անմիջապես հաստատում է Հաղորդագրությունը հետևյալ բառերից մեկը արտասանելով. «Այո», «Հաստատում եմ», «Համաձայն եմ» կամ այլ բառ, որը առանց երկակի իմաստի հաստատում է համաձայնությունը: Բրոքերի կողմից Հաղորդագրությունը համարվում է ընդունված Հաճախորդի ներկայացուցչի կողմից հաստատող բառ օգտագործելուց հետո:
- 6.6. Ընդունված է համարվում այն Հաղորդագրությունը, որի տեքստն արտասանել է Բրոքերի աշխատակիցը: Եթե Հաղորդագրությունը ճիշտ չի արտասանված Բրոքերի աշխատակցի կողմից, ապա Հաճախորդը պետք ընդհատի Բրոքերի աշխատակցին և կրկնի իր Հաղորդագրությունը ևս մեկ անգամ:


7. ՖԱՔՍԻՄԻԼԻԱԿԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 7.1. Հաճախորդի կողմից ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստով Հաղորդագրությունները պետք է ուղարկվեն Բրոքերի կողմից տրամադրված ֆաքսիմիլային համարներով կամ էլեկտրոնային փոստի հասցեներով: Այլ համարներով կամ էլեկտրոնային փոստի այլ հասցեներով ուղարկված Հաղորդագրությունները համարվում են Բրոքերի կողմից չստացված: Բրոքերի կողմից Հանձնարարականների ընդունման կամ մերժման Հաղորդագրությունները Հաճախորդին են ուղարկվում նախապես տրամադրված նույն ֆաքսիմիլային համարներով կամ էլեկտրոնային փոստի հասցեներով:
- 7.2. Բրոքերն ընդունում է Հաճախորդի կողմից ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստով ուղարկված Հաղորդագրությունը, եթե այն պարունակում է գործարքի բնույթին համապատասխան և սահմանված ձևով լրացված Հանձնարարականը (էլեկտրոնային փոստով ուղարկված լինելու դեպքում «յրջ», «եռք» կամ այլ նկարային ֆորմատով փաստաթղթի տեսքով)՝ ինչպես նաև Հաճախորդի (նրա լիազորված անձի) ստորագրությունը (իրավաբանական անձ Հաճախորդի դեպքում նաև՝ Հաճախորդի կնիքը) Բրոքերի կողմից նախապես տրամադրված հատուկ գաղտնագիրը:
- 7.3. Հաղորդագրությունների փոխանակման վերը շարադրված եղանակները որպես այդպիսի փոխանակման հիմնական եղանակ օգտագործվելու դեպքում Բրոքերի կողմից ընդունվում են միայն այն Հաղորդագրությունները, որոնք պարունակում են արժեթղթերով գործարքի կնքման Հանձնարարականներ:
- 7.4. Հաղորդագրությունների փոխանակման վերը շարադրված եղանակները որպես այդպիսի փոխանակման պահեստային եղանակ օգտագործվելու դեպքում Բրոքերի կողմից ընդունվում են միայն այն Հաղորդագրությունները, որոնք պարունակում են.
 - 7.4.1. արժեթղթերով գործարքի կնքման Հանձնարարականներ,
 - 7.4.2. արժեթղթերի դեպո հաշվով գործառնությունների իրականացման Հանձնարարականներ:
- 7.5. Հաճախորդի կողմից ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստով Հաղորդագրությունները Բրոքերի կողմից ընդունվելուց հետո, Հաճախորդը պարտավոր է Բրոքերին ներկայացնել նաև նշված Հաղորդագրությունների բնօրինակները:
- 7.6. Մինչև Բրոքերի կողմից Հաղորդագրությունների բնօրինակների ստացումը Հաճախորդը հաստատում է իր համաձայնությունը ներքոնշյալ դրույթների հետ.

- 7.6.1. Հաճախորդի կողմից ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստով ուղարկված և Բրոքերի կողմից ստացված Հաղորդագրությունները ունեն նույնպիսի իրավաբանական ուժ, ինչպես այդ Հաղորդագրությունների բնօրինակները,
- 7.6.2. Հաճախորդը և Բրոքերը հավաստում են, որ դատական կարգով վեճերի լուծման ժամանակ Բրոքերի կողմից ներկայացված Հաճախորդի սեփական Հաղորդագրությունների ֆաքսիմիլային կրկնօրինակները համարվում են պատշաճ և բավարար ապացույց այն պայմանով, որ վերջիններս թույլ են տալիս որոշել Հաղորդագրության բովանդակությունը և հաստատել այն փաստը, որ տվյալ Հաղորդագրության բնօրինակը ստորագրված է եղել Հաճախորդի (նրա լիազորված անձի) կողմից:
- 7.7. Բրոքերը և Հաճախորդը համաձայնվել են օգտագործել Հաճախորդի էլեկտրոնային փոստը որպես Հաղորդագրությունների փոխանակման պահեստային մեթոդ՝ Բրոքերի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունների ապահովման համար դրամական միջոցների և/կամ արժեթղթերի մուտքագրման պահանջի ներկայացման համար:

8. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԱՅԼ ԿԱՆՈՆՆԵՐ

- 8.1. Հաճախորդից ստացված կարգադրական Հաղորդագրությունների բնօրինակները պահվում են Բրոքերի կողմից 5 տարուց ոչ պակաս և նշված ժամանակահատվածում դրանց պատճենները կարող են տրվել Հաճախորդին (նրա լիազոր ներկայացուցիչներին) վերջինիս առաջին իսկ պահանջով: Նշված փաստաթղթերի պատճենահանման ծախսերը կրում է Հաճախորդը:
- 8.2. Հաճախորդն իրավունք ունի Բրոքերին Հաղորդագրությունների ուղարկման համար ընտրել և օգտագործել սույն ընթացակարգում թվարկված 2 կամ ավելի եղանակներ: Բրոքերը խորհուրդ է տալիս բոլոր դեպքերում հերթական Հաղորդագրության տեքստում կատարել նշում, եթե այն կրկնօրինակում է ավելի վաղ նույն եղանակով ուղարկված Հաղորդագրությունը կամ կրկնում է այլ եղանակով ուղարկված Հաղորդագրությունը:
- 8.3. Բրոքերը խորհուրդ է տալիս Հաճախորդին հնարավոր կորուստներից խուսափելու համար, որոնք կարող են առաջանալ Հաճախորդի կողմից մեկ առևտրային մատաչրջանի ընթացքում սույն ընթացակարգով նախատեսված եղանակներով ուղարկված Հաղորդագրությունների հիման վրա Բրոքերի կողմից այդ Հաղորդագրություններում պարունակվող Հանձնարարականների երկակի կատարման արդյունքում, Հաղորդագրությունների ուղարկման (տրման) ժամանակ միջտ տեղեկացնել Բրոքերին այն մասին, արդյոք Հանձնարարականը հանդիսանում է որևէ Հանձնարարականի կրկնօրինակ, թե՛ ոչ:
- 8.4. Եթե չկա Հաճախորդի կողմից ցուցում այն մասին, որ ուղարկվող (տրվող) Հաղորդագրությունը հանդիսանում է առավել վաղ ուղարկված Հաղորդագրության կրկնությունը, Բրոքերը դիտարկում և կատարում է այն՝ անկախ նախկինում ստացված Հաղորդագրություններից:
- 8.5. Բրոքերն իրավունք ունի փոփոխություններ և լրացումներ կատարել սույն ընթացակարգում: Այդ փոփոխություններն ու լրացումները Հաճախորդի համար պարտադիր են դառնում Հաճախորդին դրանց մասին պատշաճ ձևով ծանուցելու պահից, եթե հաճախորդը ծանուցումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում առարկություններ չի ներկայացնում դրանք չընդունելու վերաբերյալ:
- 8.6. Սույն ընթացակարգը, ինչպես նաև դրանում կատարվող փոփոխությունները և լրացումները տեղադրվում են Բրոքերի ինտերնետային կայքում:

| | | |
|---|---|------------------------|
|  | Կապի միջոցների օգտագործմամբ հաղորդագրությունների փոխանակման ընթացակարգ | |
| | Տարբերակ՝ 1 | Կարգավիճակը՝ հաստատված |

Հավելված 1


ԼԻԱԶՈՐԱԳԻՐ* N—

ք. Երևան
«_____» _____ 200__ թ.

Սույն լիազորագրով _____,
(Ընկերության անվանումը, Ա.Ա.Ն.)
(այնուհետև՝ **Հաճախորդ**), ի
ղեմս՝ _____,
(Անուն, Հայրանուն, Ազգանուն)
որը գործում է _____ հիման
վրա,
(Կանոնադրության, լիազորագրի, անձր հաստատող փաստաթղթի)
լիազորում
է _____,
(Անուն, Հայրանուն, Ազգանուն)
անձնագիր _____
_____ *(Սերիան, համարը, ում կողմից և երբ է տրված)*

Հաճախորդի անունից կատարել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրով և Բրոքերային (դիլերային) գործունեության իրականացման կանոններով (այնուհետև՝ Կանոններ), ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված հետևյալ գործողությունները.

1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին ներկայացնել և Հաճախորդի անունից ստորագրել արժեթղթերով գործարքների կնքման Հանձնարարականներ, իրականացնել նմանատիպ Հանձնարարականների հետկանչում:
2. Հաճախորդի անունից «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ից ստանալ գաղտնագրեր (կողային աղյուսակներ, Էլեկտրոնային ԹՎային Ստորագրության բանալիներ, տեխնիկական փաստաթղթեր և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ Հաճախորդի կողմից Հաղորդագրությունների հեռակա փոխանակման համար նախատեսված ծրագրային ապահովման միջոցներ:
3. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին ներկայացնել և Հաճախորդի անունից ստորագրել Հաճախորդի դրամական միջոցներով և արժեթղթերով ոչ առևտրային գործառնությունների իրականացման հանձնարարականների հետևյալ տեսակները.
 - դրամական միջոցների մուտքագրման հանձնարարական,
 - դրամական միջոցների հետկանչման հանձնարարական,
 - դրամական միջոցների փոխանցման հանձնարարական,
 - արժեթղթերի հաշվառման գործողությունների իրականացման հանձնարարական:
4. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին ներկայացնել և Հաճախորդի անունից ստորագրել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված Հաճախորդի դեպո հաշիվներով գործարքների կատարման հանձնարարականները, այդ թվում.
 - դեպո հաշվի բացման հանձնարարական,
 - արժեթղթերի արգելադրման հանձնարարական,
 - արժեթղթերն արգելադրումից հանելու հանձնարարական,
 - դեպո հաշվի հանձնարարականի հետկանչում,
 - տեղեկատվական հարցումներ և ցանկացած այլ գործողություններ:
5. Հաճախորդի անունից ստորագրել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հասցեով Հաճախորդի անունից ուղարկված փաստաթղթերը և հաղորդագրությունները:

| | | |
|---|---|-------------------------------|
|  | Կապի միջոցների օգտագործմամբ հաղորդագրությունների փոխանակման ընթացակարգ | |
| | Տարբերակ՝ 1 | Կարգավիճակը՝ հաստատված |
| Ամսաթիվ՝ 16/11/2007թ. | | |

6. Հարցում կատարել և ստանալ Հաճախորդի հաշվի վերաբերյալ Հաշվետվություններ, որոնք ներառում են Հաճախորդի Հանձնարարականների հիման վրա կնքված արժեթղթերով գործարքների, ոչ առևտրային գործառնությունների, ինչպես նաև «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում Հաճախորդի անունով բացված դեպո հաշիվներով կատարված գործառնությունների վերաբերյալ քաղվածքների և ծանուցումների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը:
7. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին ներկայացնել և վերջինից ստանալ գրավոր ձևով կազմված և Հաճախորդի լիազոր ներկայացուցչի կողմից ստորագրված ցանկացած Հաղորդագրություններ և փաստաթղթեր, որոնք կապված են արժեթղթերի շուկայում ծառայությունների մատուցման հետ, այդ թվում՝ Կանոններով նախատեսված Հանձնարարականները և Հաղորդագրությունները:
8. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով պետական կարգավորման մարմիններ ուղարկել համապատասխան ծանուցումներ Հաճախորդի կողմից արժեթղթերով կատարված գործարքների մասին:

Սույն լիազորագիրը տրվում է մինչև «___» _____ 200__թ. առանց երրորդ անձանց փոխանցելու իրավունքի:

Ստորագրության նմուշը _____ հաստատում եմ

Ղեկավար _____ / _____ Կ.Տ.

Գլխ. հաշվապահ _____ / _____

* Իրավաբանական անձինք ձևակերպում են լիազորագիրը ընկերության ֆիրմային բլանկի վրա և հաստատում են ընկերության ղեկավարի ստորագրությամբ և ընկերության կնիքով: Ֆիզիկական անձինք լիազորագիրը ձևակերպում են անձամբ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի աշխատակցի ներկայությամբ կամ ներկայացնում են նոտարի կողմից պատշաճ վավերացված լիազորագիր:

Սույն օրինակով լիազորագիր ձևակերպվում է միայն Հաճախորդի կողմից լիազոր ներկայացուցչի նշանակելու անհրաժեշտության դեպքում:

Փոխանցվող լիազորությունների ծավալը որոշվում է Հաճախորդի կողմից ինքնուրույն՝ նշված սպառիչ թվարկումից: